

տօնին ամէն ազգի ուխտաւորներ բարեպաշտութեամբ Յորդանան կ'երթան՝ լուացուելու, նոյնիսկ յոյն ուխտաւորներէն ոմանք ալ լուացուելէ յետոյ կրկին կը մկրտուին. այս պատճառաւ՝ զոհեր ալ պակաս չեն ըլլար: Իսկ հայերը թէև կանուխէն սովորութիւն ունէին Յորդանան երթալ լուացուելու, բայց ժէ. դարուն ինչ ինչ անպատեհութիւններու պատճառաւ զանց ըրին զայն, միայն թէ Հայոց վանքը սովորութիւն ըրաւ բաւական քանակութեամբ Յորդանանի ջուրէն բերել տալով ուխտաւորներուն բաժնել: Մինչև անգամ Եւրոպացիք նոյն ջուրէն հետերնին կը տանին, անով մկրտութիւն կ'ընեն կամ մկրտութեան ջուրին կը խառնեն, որ խիստ մեծ յարգ ունի քովերնին, ինչպէս 1868 թուականին Աւստրիոյ Ժօզէֆ կայսրը Յորդանանի ջուրէն սոյն նպատակին համար խնդրած ըլլալով Երուսաղէմի հիւպատոսէն՝ Հայոց Եսայի պատրիարքը յախճապակիէ պատուական ամաններ տուած էր ջուրը մէջը լեցնելու համար. անոնց փոխարէն կայսրը իր և կայսրուհիին կենդանագիր պատկերները ուղարկած է Հայոց պատրիարքին եւ որոնք ցարգ կախուած են Պատրիարքարանի դահլիճին մէջ (Ռ. Ս. Տ. էջ 302-303):

Ը. ՄԱՄԻԼԼԱ(*), ՅՈՎՀԱՆՆՈՒ ԾՆՈՒՆԳ,
ԽԱՉԱՎԱՆՔ

1. Մամիլայի աւանդութիւնները. — Երուսաղէմի Յոպպէի դուռնէն մինչև Պիրիթ Մամիլլա հինգ վայր-

(*) Մամիլլա անունը որ Իսլամ գրաւումէն առաջ կը տուէր աւազանին, արաբական ծագում չունի, այլ եբրայական: Միւնի